

*Մասնաթերքի (խոզի, տավարի, ոչխարի միս) շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքները*

**1. Ուսումնասիրության մեթոդաբանությունը.**

Հանձնաժողովը մասնաթերքի վերոնշյալ տեսակների ներմուծմամբ, տեղական արտադրությամբ և իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից, գյուղացիական տնտեսություններից, ինչպես նաև ԱՀ ֆինանսների և գյուղատնտեսության նախարարություններից հավաքագրվել է տեղեկատվություն 2018 թվականի ընթացքում մասնաթերքի շրջանառության ոլորտում իրականացրած գործունեության վերաբերյալ:

Տվյալ ոլորտի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար օգտագործվել են նաև ԱՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տվյալները:

Ուսումնասիրության աշխարհագրական տարածքը ընդգրկել է Արցախի Հանրապետությունը, իսկ ապրանքատեսակային սահմանը համարվել է Արցախի Հանրապետությունում իրացվող համապատասխան մասնաթերքի ամբողջ տեսականին:


Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են տնտեսավարող սուբյեկտների իրացման տեսակարար կշիռները 2018 թվականին ներմուծված, արտադրված և իրացված խոզի մսի ընդհանուր ծավալի մեջ: Մասնավորապես՝ համաձայն ձեռք բերված տվյալների և իրականացրած վերլուծությունների նշված ժամանակահատվածում՝

**խոզի միս** ապրանքային շուկայում 55 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 69.7 տոննա խոզի միս, որից 18.0 տոննան օգտագործվել է վերամշակման համար, իսկ մնացած 51.7 տոննա խոզի միսը, որը կազմում է ընդհանուր շուկայի իրացման 1 տոկոսը, իրացվել է շուկայում: Մնացած 99 տոկոսը կամ 5383,3 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից:

Արցախի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ներմուծված և արտադրված խոզի մսի ծավալները ընդունվել են որպես իրացում, որի ընդհանուր ծավալը կազմել է 5 435 տոննա:

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն «Էլիտ գրուպ» ՍՊԸ՝ 0.29 տոկոս, «Ավանեսյան Էրիկ» ԱԶ՝ 0.17 տոկոս և «Զաքարյան Արայիկ» ԱԶ՝ 0.13 տոկոս, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 0.59 տոկոսը:

Դիտարկվել է նաև ոլորտի արտադրության կառուցվածքը ըստ շրջանների: Խոզի մսի արտադրության կառուցվածքում առաջատար է Մարտունու շրջանը, որի մասնաբաժինը կազմել է 25 տոկոս:




**Տավարի միս** ապրանքային շուկայում 35 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 168,2 տոննա տավարի միս, որից 62.3 տոննան օգտագործվել է վերամշակման համար իսկ մնացած 105,9 տոննան, որը կազմում է ընդհանուր իրացման 1.7 տոկոսը, իրացվել է շուկայում: Մնացած 98.3 տոկոսը կամ 5989,1 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից:

ԱՀ-ում տավարի մսի իրացման ընդհանուր ծավալը 2018 թվականի ընթացքում կազմել է 5989,1 տոննա:

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն «Էլիտ գրուպ» ՍՊԸ 1.6%, «Բաբայան Լյովա» ԱԶ 0.13% և «Հարությունյան Վիտալի» ԱԶ 0.10%, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 1.83 տոկոսը:


Ըստ շրջանների, ոլորտի արտադրության կառուցվածքում առաջատար է Քաշաթաղի շրջանը, որի մասնաբաժինը կազմել է 22.6 տոկոս



**Ոչխարի միս** ապրանքային շուկայում 6 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 1.1 տոննա ոչխարի միս, որը կազմում է ընդհանուր շուկայի իրացման 0,1%: Մնացած 99.9 տոկոսը կամ 1 149,2 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից:

Իրացման ընդհանուր ծավալը 2018 թվականի ընթացքում կազմել է 1150,3 տոննա իսկ, իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն «Էլիտ գրուպ» ՍՊԸ՝ 1.1 տոկոս, «Բեզլարյան Լենա» ԱԶ՝ 0.103 տոկոս և «Արտաշյան Արտաշես» ԱԶ՝ 0.095 տոկոս, անհատ ձեռնարկատերերը, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 1.3 տոկոսը:

Ըստ շրջանների, ոլորտի արտադրության կառուցվածքում առաջատար է Քաշաթաղի շրջանը՝ մասնաբաժինը կազմել է 34.5 տոկոս:



Ուսումնասիրության ընթացքում անդրադարձ է կատարվել շուկայի գնագոյացման մեխանիզմներին, ինչպես նաև մանրածախ առևտրի ոլորտին: Արդյունքում պարզվել է, որ մասնաճյուղի շրջանառության մանրածախ իրացման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները հիմնականում գյուղացիական տնտեսություններից ձեռք են բերում և վերավաճառում մասնաճյուղի կիրառելի միջինում 12-15 տոկոս վերադիր:

Ուսումնասիրության համաձայն մասնաճյուղի շրջանառության ոլորտում հիմնականում իրացվում է տեղական արտադրության մասնաճյուղի, այդ իսկ պատճառով գները ձևավորվում են ներքին շուկաներում՝ բացառապես առաջարկի և պահանջարկի հիման վրա (հաշվի առնելով խոշոր սուբյեկտների բացակայությունը):

### **Եզրակացություն**

Մասնաճյուղի շրջանառության ոլորտում ձևավորված ներկայիս իրավիճակի ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Մասնաճյուղի շրջանառության ոլորտի խոզի միս, տավարի միս և ոչխարի միս ապրանքային շուկաները ունեն ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

2. Ոլորտի իրացման կառուցվածքի դիտարկումները ցույց են տվել, որ ոլորտը գրեթե ամբողջությամբ բաժին է հասնում գյուղացիական տնտեսություններին:

3. Գնի և գնագոյացման մեխանիզմների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դիտարկված մասնաճյուղի տեսակների գները ձևավորվում են բացառապես առաջարկի և պահանջարկի հարաբերակցության արդյունքում, իսկ գնի վրա միակողմանի ազդելու հնարավորությունը բացառվում է, քանի որ ոլորտում չկան խոշոր իրացնողներ:

ԱՅ ԴՅՏՄԿՊՅ աշխատակազմի տնտեսական  
մրցակցության պաշտպանության բաժին